

# ARCHIVE COPY

Please return.



Armenian Apostolic Church of America  
138 East 39th Street, New York, New York 10016

Volume XXI, No. 4 — October 1998

## Մշակույթի Ամիս: Մշակույթ եւ Ամիս:

Առաջինը դարերուն ընթացքին հայու հոգիի եւ մտքի թռիչքի արտայայտութիւնն ու պատմութիւնը, երկրորդը ժամանակ, որ երբ մշակույթին կ'ակնարկէ՝ չի սահմանափակուիր ժամերու եւ օրերու հաշիւով, որովհետեւ անմահ է, այնպէս ինչպէս հողը անմահ է:

Հայուն ազգային մշակույթը սկսաւ Մեսրոպ Մաշտոցի գիրերու գիւտով: Հայ գիրերու գիւտով ստեղծուեցաւ գրականութիւն, գրականութեամբ՝ հայ քրիստոնէայ ոգի, հայ ոգիով՝ ստեղծագործութիւն եւ ստեղծագործութիւններու ամբողջութիւնը՝ հայ մշակույթ:

Կրկնուած նշմարտութիւն է, որ ժողովուրդներ կրնան տիրել կա՛մ զինական ոյժով եւ կա՛մ մշակույթի ոյժով: Առաջինը կրնայ կործանիլ, երկրորդը՝ կը դիմանայ, միեւնոյն ատեն դիմանալ կը սորվեցնէ:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց Հայաստանի քաղաքական ճգնաժամին փնտռեց երկրորդ զէնքը, գտաւ, զինեց եւ յաղթեց: Անմահութեան ճամբան գտաւ, որուն ճամբորդակից եղաւ երբեմն մեր զէնքի ոյժն ալ: Այսօր մեր մշակույթի գորութիւնը ուղեկից է ազատ ու անկախ Հայաստանը, որուն ապահովական, տնտեսական եւ այլ պարտաւորութեանց կողքին, կը կտակուի մշակույթի հանդէպ պարտաւորութիւնը, որ ոչ մէկ ատեն պէտք է ընկալուի շուկայիկ կետադով շուկայիկ տնտեսութեան հեքին մէջ:

Ս. Մեսրոպ Մաշտոց եւ իր առաքելութեան բոլոր հաւատացողները յաղթեցին աշխարհին: Հայ Եկեղեցւոյ առաքելութիւնն է արծարծ պահել հոգեւոր, բարոյական եւ մտաւոր բոլոր տեսակի արժէքներն ու արժանիքները, որպէսզի անոնցմով կարենայ զինել մեր նոր սերունդը: Առանց այս արժէքներուն օր մը շատ հաւանաբար պարտուինք աշխարհին:

Բայց ոչ, մեր առաքելութիւնն է յաղթել աշխարհին:  
Մեր զէնքը՝ մեր մշակույթն է:

Օշական Եպս. Չօլոյեան  
Առաջնորդ Միացեալ Նահանգներու  
Արեւելեան Շրջանի եւ Գանատայի

*This issue of Outreach is a pictorial issue devoted to the various activities of our Prelate, Bishop Oshagan Cholyan, and especially the parish visits that he is continuing to make. In each parish that His Grace visits he meets with the Board of Trustees, the NRA delegates, executive members of various organizations, the faithful and most especially the young people.*

*In the coming months we will continue tracing the steps of Bishop Cholyan as he continues to visit every parish within the Eastern Prelacy.*

—Editor

## UAF 100th Airlift Commemorated



Bishop Oshagan Cholyan (left) and Archbishop Khajag Barsamian with Robert Kocharian, President of Armenia, during the President's visit to New York City enroute to California for the United Armenia Fund's banquet celebrating the 100th humanitarian airlift. Dignitaries attending including the President and First Lady; His Holiness Karekin I, Catholicos of All Armenians; His Holiness Aram I, Catholicos of Cilicia; Benefactor Kirk Kerkorian; Elizabeth Dole, President of the American Red Cross; Former Governor of California, George Deukmejian; Alex Yemendjian, President of MGM and UAF chairman; and comedienne and popular late-night host, Jay Leno.

## 1998 Prelacy Raffle Winners

First Prize, Ticket No. 2031, \$10,000.

Zohrab Stamboulian, New Jersey

Second Prize, Ticket No. 3320, \$5,000:

Christopher Vahan Arzoomanian, New York

Third Prize, Ticket No. 1681, \$3,000:

Michael Boloian and Sarkis Sarkisian, Massachusetts

Fourth Prize, Ticket No. 1779, \$1,000:

John Cocce, Jr., Massachusetts

Fifth Prize, Ticket No. 1473, \$1,000:


Ara Killian, Illinois

See Page 4  
for Gift-Giving Ideas  
from the Prelacy Bookstore



Bishop Oshagan Cholyan and Bishop Moushegh Mardirossian, Prelate of the Western Prelacy with President and Mrs. Robert Kocharian prior to the banquet.

## Datevatzis on a Pilgrimage to Armenia



Under the sponsorship of the Prelacy, 40 students and instructors of the St. Gregory of Datev Institute went to Armenia this summer. The group was led by Very Rev. Anoushavan Tanielian, Vicar General of the Prelacy, and Deacon Shant Kazanjian, Director of the Armenian Religious Education Council. Also accompanying the group were Rev. Dr. Mesrob Tashjian, Rev. Nerses Manoogian and Deacon Antranig Azarian. The fourteen day journey featured a mix of lectures and sightseeing providing the participants an emotionally rewarding and educational experience.

Photo above: The Datevatzis in Oshagan the burial site of Mesrob Mashdotz, the founder of the Armenian alphabet.

Photo below: The Datevatzis visit Dzizernagapert, the memorial and eternal flame honoring the martyrs of the genocide.



**PLEASE REMEMBER YOUR ANNUAL CONTRIBUTION TO OUTREACH**

## ANEC Seminar Brings Together Armenian Educators



More than fifty Armenian educators gathered at Sts. Vartanantz Church Hall in Ridgefield, New Jersey, for the annual seminar sponsored by the Armenian National Education Committee (ANEC). Mr. Hovsep Avakian, ANEC chairman, spoke about the ways and means of making the Armenian textbook more pleasant as well as methods of teaching grammar, spelling, literature, and creative writing. Professor Asbed Vassilian of Rutgers University spoke about the continuity from grade and high school instruction to graduate level Armenian studies.

Mrs. Gilda B. Kupelian, director of ANEC, spoke about short and long term goals and projects of ANEC. The 1998 ANEC "Teacher of the Year" award was bestowed upon Mrs. Mayda Melkonian, who teaches at the Armenian Sisters Academy in Lexington, Massachusetts and is the new principal of the St. Stephen's Armenian Saturday School in Watertown, Massachusetts.

## Prelacy Bookstore Book Fair in N.J.



Each year the Prelacy's Bookstore hosts a Book Fair during Cultural Month at Sts. Vartanantz Church in Ridgefield, New Jersey, providing an opportunity for book lovers to browse and select books and other items from the Bookstore's extensive inventory. In conjunction with the Book Fair this year the Hamazkayin of New Jersey hosted the presentation of two new books by Krikor Pidedjian, "Armenian Revolutionary Songs in the History of Armenian Music" and "The Tricolor Flag."

### OUTREACH

A publication of the  
Armenian Apostolic Church of America  
Eastern United States and Canada  
138 E. 39th Street, New York, NY 10016  
Tel: (212) 689-7810 Fax: (212) 689-7168  
E-Mail: armprelacy.org  
Web page: www.armprelacy.org

Bishop Oshagan Choloyan, *Prelate*

Iris Papazian, *Editor*  
Martiros Minas-Haftvani, *Business Manager*

OUTREACH (USPS 426-490) is published monthly, with the exception of a combined summer (June, July, August) issue by the Prelacy of the Armenian Apostolic Church of America, 138 E. 39th Street, New York, NY 10016. Unsolicited manuscripts are welcome; please include a stamped, self-addressed envelope. Signed articles do not necessarily reflect the policy of the Armenian Apostolic Church of America. Send all correspondence to the above address to the attention of the Editor. Printed in the United States of America. Periodical rate postage paid at New York, NY 10016. Postmaster: Send address changes to OUTREACH, 138 E. 39th Street, New York, NY 10016. ISSN: 10643087



Very Rev. Anoushavan Tanielian, Vicar General of the Prelacy (Eastern U.S.) and Pastor of St. Sarkis Church in Douglaston, New York, was honored on October 3 on the occasion of the 25th anniversary of his ordination to the priesthood. From left to right, Bedros Givelekian, chairman of the testimonial committee; Archbishop Mesrob Ashjian, Executive Secretary of the 17th Centenary Commemoration; Bishop Oshagan Choloyan, Prelate; and Professor Hratch Zadoian, Vice Chairman of the Prelacy's Executive Council.

# Prelate Continues Visits to Parishes

## ԳԵՐՇ. Տ. ՕՇԱԿԱՆ ԵՊՍ. ՉՕԼՈՑԵԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՏԻԹՐՈՅՏԻ ԳԱՂՈՒԹԻՆ



Meeting with residents of the St. Sarkis Senior Citizens Tower during the Prelate's visit to St. Sarkis Church community, Dearborn, Michigan.



Meeting with representatives of church and community organizations.



Parish visits always include school children. Here Shant Palandjian, Armen Mardigian, and Anoush Mardigian, gather to say a personal hello to Sr. Spazan and Hayr Sourp.



With Michael Guido, Mayor of Dearborn, who welcomed Sr. Spazan on the occasion of his first official visit.

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Շրջանի եւ Գանատայի Թեմին արժանընտիր Առաջնորդը՝ Գերշ. Տ. Օշական Եպ. Չօլոցեան, ընկերակցութեամբ Թեմական Վարչութեան Ատենապետին՝ Պր. Ճէք Մարտոյեանի, ընդառաջելով Ս. Սարգիս Եկեղեցւոյ Հոգաբարձութեան հրահրին, Տիթրոյթ ժամանեց Կիրակի, Հոկտեմբեր 18, 1998ի առաւօտեան, հաւատացեալ ժողովուրդին հետ տօնախմբելու Ս. Սարգիս Եկեղեցւոյ այժմու վայրին մէջ հաստատման 38րդ տարեդարձը:

Ս. Սարգիս Եկեղեցին լեցուն էր հաւատացեալ ժողովուրդով, որ եկած էր տեսնելու իր հոգեւոր հայրը, իր եռանդուն առաջնորդը եւ իր տեսլապաշտ ղեկավարը: Սրբազան Հայրը, իր եպիսկոպոսական հանդերձանքին մէջ, Դպրաց Դասին առաջնորդութեամբ, «Նորհուրդ Նորին» շարականի կշռոյթով, բուրվառնեղէն ծխացող խունկերուն ընդմէջէն կը յաւաքանայ դէպի խորան, մատուցանելու իր աղօթքը առ Աստուած, խնդրելով Երկնաւորին Աջին պահպանութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Հայաստանի Հանրապետութեան համար:

Պատարագի ընթացքին, պատարագիչ Սրբազան Հօր կ'ըստարկէ Ս. Սարգիս Եկեղեցւոյ սարկաւազաց դասը, կարգապահ եւ լուրջ: Ոգեշունչ պատարագի երգեցողութիւնը կը կատարէ դպրաց դասը, ինքնավստահ եւ հեզասահ, հետեւելով ղեկավարին ցուցմունքներուն:

Սրբազան Հայրը իր անդրանիկ պատգամին մէջ մէջբերեց Երկնաւոր Վարդապետին «Ես եմ աշխարհի հացը» խօսքը, Հայց-Եկեղեցին նմանցնելով այդ հացին, որ հոգեւոր սնունդ տուաւ մեր ժողովուրդին եւ այսօր եւս, Հայց-Եկեղեցին կը մնայ այն կեդրոնը, որ մեր ապագայ սերունդին պիտի մատակարարէ հայեցի դաստիարակութիւն, հոգեւոր կրթութիւն, հոգեմտաւոր զարգացում եւ լուսաւորում, պատրաստելու ապագայի առաջնորդներն ու ղեկավարները:

Պատարագի աւարտին, «Լիլիան Առաքելեան» հանդիսասրահին մէջ, ի պատիւ Սրբազան Հօր այցելութեան, Հոգաբարձութեան կողմէ պատրաստուած հիւրասիրութեան ընթացքին իրագործուեցաւ կոկիկ յայտագիր մը: Զոյգ քայլերգներու երգեցողութենէն ետք, Պր. Ճորձ Մանուկեան բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն, անդրադառնալով անցեալին իրագործուած արդիւնքներուն եւ շեշտելով ապագային աւելին կատարելու հրամայականը: Օրդ. Թեմի Միջկեան արտասանեց Վահան Թէքիսեանի «Եկեղեցին Հայկական»ը: Արժ. Տ. Կորիւն Ա. Քհնյ. Շրիքեան, բարի գալուստ մաղթեց Սրբազան Հօր, վերլիչելով տարիներ առաջ Սրբազան Հօր հետ իր ունեցած հանդիպումները: Հոգաբարձութեան անունով Ատենապետ՝ Մայքըլ Յակոբեան բարի գալուստ մաղթեց Սրբազան Հօր եւ վերլիչեց Սրբազան Հօր կատարած աշխատանքը երիտասարդական հանդիպումներուն: Պր. Ճէք Մարտոյեան, Թեմական Վարչութեան անունով անդրադառաւ Առաջնորդարանի պատրաստած ծրագիրներուն եւ ակնկալութեանց: Հոգշ. Տ. Նաւասարդ Վրդ. Մարտոյեան, Ս. Սարգիս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը ներկայացուց Սրբազան Հօր կենսագրականը եւ ընդգծեց Սրբազան Հօր ունեցած լրջութիւնն ու հետապնդումը իր նպատակներուն իրագործման մէջ եւ հրաւիրեց Սրբազան Հայրը իր խօսքը ուղղելու ներկաներուն:

Սրբազան Հայրը իր խօսքին մէջ շեշտեց հոգեւոր դաստիարակութեան անհրաժեշտութիւնն ու հրամայականը, որ հիմքը պիտի կազմէ վաւերական հայուն հոգեմտաւոր կրթութեան: «Երիտասարդութիւն չունեցող եկեղեցին, ապագայ չունեցող եկեղեցի է», ըսաւ ան եւ շեշտեց կատարուածով գոհանալու վտանգաւոր հասկացողութենէն, որ լծացման կը տանի գաղութ մը: Ընդգծեց միասնաբար գործելու կարեւորութիւնը, «իրարու համար եւ իրարու հետ» նշանաբանը թող դառնայ հաւաքական աշխատանքի գրգիռը, եզրակացուց ան:

Սրբազան Հօր «Պահպանիչ»ով եւ «Կիրիլիա» երգի երգեցողութեամբ Ս. Սարգիս Եկեղեցւոյ 38րդ տարեդարձը հասաւ իր լրումին:

\*\*\*

Նոյն երեկոյ, Սրբազան Հայրը, Թեմական Վարչութեան Ատենապետին ընկերակցութեամբ, տեսակցութիւն ունեցաւ Հոգաբարձութեան անդամներուն եւ Ս. Սարգիս Եկեղեցւոյ երեսփոխաններուն հետ, գաղափարներ փոխանակելով ծրագիրներու մասին, յատկապէս անդրադառնալով երիտասարդ սերունդին հոգեւոր եւ հայեցի դաստիարակութեան:

\*\*\*

Երկուշաբթի, Հոկտեմբեր 19, 1998ին, առաւօտեան ժամը 10:00ին, Սրբազան Հայրը, Հոգեւոր Հովիւին ընկերակցութեամբ այցելութիւն տուաւ Երէջ անդամներուն եւ անոնց հետ բաժնեց առաւօտեան նախաճաշը: Ապա, Հոգաբարձութեան Ատենապետին հետ միասին, այցելեց Տիրպորնի Քաղաքապետին՝ Պր. Մայքըլ Կայտոյի, իր շնորհակալութիւնն ու գնահատանքը արտայայտելու տարիներու հայ համայնքին իր ցուցաբերած հոգածութեան եւ աջակցութեան համար:

Երեկոյեան, Հայ Կեդրոնին մէջ, Սրբազան Հայրը հանդիպեցաւ «Ազատամարտ» կոմիտէի անդամներուն եւ Համազգայինի, ՀՕՄԻ Միջ-Վարչականի, այլազան մասնաճիւղերու, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հայրենիքի վարչութեանց ներկայացուցիչներուն հետ եւ բաժնեց իր մտահոգութիւններն ու ակնկալութիւնները: Ան անգամ մը եւս շեշտեց միասնաբար աշխատելու հրամայականը եւ «իրարու հետ, իրարու համար» նշանաբանը:

\*\*\*

Երեքշաբթի, Հոկտեմբեր 20, 1998ին, առաւօտեան ժամը 9:30ին, Սրբազան Հայրը, Հոգեւոր Հովիւին ընկերակցութեամբ, այցելեց Ս. Սարգիս Եկեղեցւոյ նախկին Հոգեւոր Հովիւին՝ Արժ. Տ. Կորիւն Ա. Քհնյ. Շրիքեանի տունը եւ միասնաբար բաժնեցին առաւօտեան նախաճաշը եւ քննարկեցին գաղութը մտահոգող հարցեր: Ապա, ժամը 12:00ին, «Լիլիան Առաքելեան» հանդիսասրահին մէջ, հաւաքական ճաշ ունեցաւ Ս. Սարգիս Եկեղեցւոյ Fellowship Clubի, Տիկնանց Յանձնարարութեան, Դպրաց Դասի եւ այլ կազմակերպութեանց անդամներուն հետ եւ անոնց փոխանեց նաեւ իր ակնկալութիւններն ու սպասումները:



# Armenian Prelacy Bookstore

Գրապահ Ազգային Առաջնորդարանի  
 138 East 39th Street New York, NY 10016  
 Tel. (212) 689-7810 Fax (212) 689-7168  
 E-mail: bookstore@armprelacy.org



**Ալիծ Աղապապեան**  
**Ըսէ ով է ընկերդ**  
 Նայկական Ժողովրդական Պարմութիւն  
 Քալիֆորնիա, 1996, 31 էջ  
 թղթ. \$12.00

**Թեքեան Վեհանոյշ**  
**Տոհմածառ (Պարմութեան)**  
 Նիւ Եորք, 1997, 300 էջ  
 լաթ. \$35.00

**Կիլիսեան Պարթև Արդ.**  
**Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ**  
**Նայասարանի Դարձը**  
 Անթիլիաս, 1998, 112 էջ  
 թղթ. \$5.00

**Փիլիսեան Գրիգոր**  
**Նայ Յեղափոխական Երգերուն Տեղը**  
**Նայ Երաժշտութեան Պարմութեան Մէջ**  
 Նիւ Եորք, 1998, 280 էջ  
 թղթ. \$20.00

**Արմէն Տոնոյեան**  
**Նայասարանի Նանրապեղութեան**  
**80-ամեակ**  
 Քալիֆորնիա, 1998, 112 էջ  
 թղթ. \$7.00

**Արմէն Տոնոյեան**  
**Արցախեան Ազատագրական Պայքար**  
 Քալիֆորնիա, 1998, 88 էջ  
 թղթ. \$7.00

**Նայ Ժողովրդական Ներքիւրներ**  
 Երեւան, 1998, 512 էջ  
 լաթ. \$8.00


**Միլսահեան Լիւսի**  
**Փոքրիկ Ներոսներ**  
 Պարկերազարդ  
 Նալչայ, 1997, 128 էջ  
 թղթ. \$10.00

**Balakian, Peter**  
**Black Dog of Fate**  
 New York, 1998, 292pp.  
 soft cover \$13.00

**Kricorian, Nancy**  
**Zabelle, A Novel**  
 New York, 1998, 239pp  
 hard cover \$23.00

**Mugrditchian Hovhannes**  
**To Armenians with Love**  
 The Memoirs of a patriot  
 USA, 1996 204pp.  
 hard cover \$14.95

**Housepian Dobkin Marjorie**  
**Smyrna 1922**  
 The Destruction of a city  
 New York, 1998, 275pp.  
 soft cover \$19.95



**Guroian Vigen**  
**Tending the Heart of Virtue**  
 How Classic Stories  
 Awaken a child's Moral Imagination  
 New York, 1998, 198pp.  
 hard cover \$22.00

**Iran-Armenia**  
**Golden Bridges**  
 Twentieth Century  
 Iranian-Armenian painters  
 Glendale, 1997, 198pp.  
 hard cover \$75.00

**Ghougassian, Vazken S.**  
**The Emergence of the Armenian Diocese of New Julfa**  
**in the Seventeenth Century**  
 Atlanta, 1998, 326pp.  
 hard cover \$29.95

**Boghossian, Armen**  
**Armenia And Nagorno Karabakh**  
 Problems of Security and Development  
 Belmont, 1998, 42pp.  
 soft cover \$8.00

**Russia and the Armenians of Transcaucasia, 1797-1889**  
**A Documentary Record**  
 Annotated, Translation and Commentary by  
 George A. Bournoutian  
 California, 1998, 578pp.  
 hard cover \$49.95



**Armenian in the Ottoman Empire**  
 An Anthology of Transformation 13th-19th Centuries  
 Vatche Ghazarian, Editor  
 Massachusetts, 1997, 836pp.  
 hard cover \$69.95

**Treasures in Heaven**  
**Armenian Art, Religion, and Society**  
 New York, 1998, 180pp.  
 soft cover \$35.00

**Khachaturian, Shahen**  
**Armenian Artists**  
**Hagop Hagopian**  
 Canada, 1997, 192pp.  
 hard cover \$75.00

**The Armenian People**  
 From Ancient to Modern  
 Times Vol. I  
 Edited by Richard G. Hovannisian  
 New York, 1997, 384pp.  
 hard cover, \$49.95

Vol. II, 1997, 493 pp.  
 New York, 1997, 505pp.  
 hard cover, \$49.95



## Armenian Prelacy Bookstore Order Form

| Description of Item    | Quantity | Price |                                     |                 |
|------------------------|----------|-------|-------------------------------------|-----------------|
| _____                  | _____    | _____ | Sub Total                           | \$ _____        |
| _____                  | _____    | _____ | Add \$4.50 for S&H                  | \$ _____        |
| _____                  | _____    | _____ | add \$1.00 for each additional book | \$ _____        |
| <b>Ship to:</b>        |          |       | <b>TOTAL</b>                        | <b>\$ _____</b> |
| Name _____             |          |       |                                     |                 |
| Address _____          |          |       |                                     |                 |
| City, State, Zip _____ |          |       |                                     |                 |
| Telephone (Day) _____  |          |       |                                     |                 |

Make checks payable to:  
**Armenian Prelacy Bookstore**  
 138 East 39th Street, New York, NY 10016